«ԱՐՄԱՎԻՐ 1» ՎԿ

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՈՒՍՈՒՑՉԻ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ ուսուցչի կողմից երեխաների ուսումնառության ընթացքում նկատված կրթական կարիքների բացահայտում

Հետազոտող ուսուցիչ՝ Ա. Մադոյան

ՀՀ Արմավիրի մարզի Նորապատի միջնակարգ դպրոց

Մենթոր ուսուցիչ՝ Լ. Չալյան

ԱՐՄԱՎԻՐ-2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Նախաբան 3 էջ

2. Հետազոտության ընթացք 4 էջ

3. Եզրակացություն 14 էջ

4. Գրականության ցանկ 15էջ

Նախաբան

Աշխարհում երեխաները տարբեր են, դա բնական է, և այդ տարբերություններն էլ ցանկացած հասարակություն դարձնում է ավելի հարուստ և բազմազան, հետևաբար, այն պետք է իր արտացոլումն ունենա նաև դպրոցում:Դպրոցները պետք է ապահովեն բոլոր երեխաների մասնակցությունը՝աշակերտական միջոցառումներին,միջանձնյա փոխհարաբերություններ ամրապնդող խմբակներին, օգտագործելով տարբեր մոտեցումներ ու հնարներ: Երեխաների դժվարությունները կրթության մեջ կարող են շատ տարբեր լինել: Օրինակ նրանք կարող են դժվարություններ ունենալ կարդալիս, գրելիս, թվերի հետ աշխատելիս կամ շրջապատող մարդկանց հետ հաղորդակցվելիս, որի համար նրանց պետք է օգնել՝ լրացուցիչ աջակցելով և համագործակցաբար աշխատելով ծնողների հետ: Երեխաների մի խմբի համար այդ դժվարությունները կարող են պայմանավորված լինեն հաշմանդամությամբ, որը հանրակրթական ծրագրերի յուրացումը դարձնում է ավելի բարդ: Որոշների համար ժամանակավոր են, որոշների համար էլ մշտական այդ դժվարությունները:

Ըստ այդմ կրթական կարիքները մենք կառանձնացնեք մի քանի խմբերի աշխակերտների համար: Օրինակ ովքեր չեն համարվում ԿԱՊԿՈՒ սովորողներ և հակառակը:

Ցանկացած աշխակերտ մուտք գործելով դպրոց ունի կրթությունն ապահովվող կարիքներ՝ նայած թե ինչ տարիքում է նա գտնվում և ինչ միջավայրում է նա դաստիարակվել: Դրանց նմանությունները, տարբերությունները, առանձնա-հատկությունները կդիտարկենք հետազոտական աշխատանքի ընթացքում:

Հետազոտության ընթացքը

Արժեքային համակարգ ձևավորելու և դասապրոցեսը հարստացնելու նպատակով կարևորվում է աշակերտի կրթական կարիքների բացահայտումը, որպեսզի դասանցնի նպատակային և արդյունավետ:

Մենք պետք է ձգտենք օգնել ծնողներին, շուտ բացահայտել և աջակցել երեխաներին, որոնք ունեն ուսումնական ծրագրերի ճիշտ պլանավորման, միջավայրային հարմարեցումների և անհրաժեշտ մասնագիտական ծառայությունների տրամադրման: Կրթության մատչելիությունն ու հասանելիությունն, որպես հասարակության զարգացման ու առաջընթացի հիմնական միջոց, ամրագրվել են դեռևս 1990- ականներին, երբ ՄԱԿ- ի և ՅՈՒՆԵՍԿՕ- ի անդամ երկրների կողմից §Կրթությունը բոլորի համար հռչակագիրը¦:

Համաձայն այս հռչակագրի, կրթական այս ծրագրերը կիրականացվեն՝ հաշվի առնելով այդ առանձնահատկությունները: Օրինակ 2010 թվականին տեղի ունեցավ Հայաստանի կողմից հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին ՄԱԿ- ի կոնվենցիայի վավերացումը և 2015թվականի վավերացումը , մասնավորապես կայուն զարգացման օրակարգի և նպատակների ընդունումը ՀՀ կողմից որոնք էլ ավելի ամրապնդեցին հատուկ կրթության համակարգի բարեփոխումները երկրում:

ՀՀ-ն ազգայնացրել է , դրանով իսկ ստանձնելով միջազգային պարտավորություններ ապահովվելու դրանց գործունեությունը և պարբերաբար հաշվետվողականությունը : Այս հռչակագրի միջոցով պարտավորվում են ցանկացած աշակերտի համար դպրոցում ստեղծել այնպիսի ուսումնական և կրթական միջավայր, որ աշակերտը որևէ բանի կարիք չունենա կրթվելու և զարգանալու համար:

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների հասարակության մեջ ներառման գործընթացը կախված է այդ երեխաների նկատմամբ հասարակության վերաբերմունքից, նրանց կյանքի և առանձնահատկությունների մասին շրջապատողների մասին տեղեկացվածությունից: Որոշիչ է այն հարցը թե ինչպես է առանձին վերցրած յուրաքանչյուր աշակերտի համար ապահովվում , որ այդ նա ստանա իր կարողությունների և կարիքներին համապատասխան որոկյալ կրթություն: Պետք է գնահատել անհատի ընդունակությունները, կարողությունները, հետաքրքրությունները և դժվարությունները:

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատումը երեխայի զարգացման տարբեր փուլերում նրա մասին բազմաբնույթ տեղեկությունների հավաքագրման ու տվյալների համակարգման գործընթաց է, որն իրականացվում է երեխայի միջավայրում՝ ապահովելու ուսման ճիշտ պլանավորումը, անհրաժեշտ մասնագիտական ծառայությունների և միջավայրային հարմարվողականության ստեղծումը :

Կրթության առանձնահատուկ պայմաններ

Երեխայի հանրակրթական հիմնական ծրագրի յուրացմանը նպատակաուղղված առարկայական ծրագրերին և ուսուցման մեթոդների , ուսուցման անհատական տեխնիկական միջոցների հարմարեցված միջավայրի , ինչպես նաև ª մանկավարժական , սոցիալական և այլն:

Առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներ

Ուսուցման հետ դժվարություններ այդ թվում՝ զարգացման կամ մտավոր առանձնահատկություններ ունեցող երեխա, որի կողմից հանրակրթական ծրագրերի յուրացման համար անհրաժեշտ են հատուկ պայմաններ:

Մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություն

Ուսումնամեթոդական, հոգեբանական և մանկավարժական աջակցություն, որը ցուցաբերվում է սովորող երեխային , նրա ծնողին և մանկավարժական աշխատողին:

Մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն

Երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների գնահատումը կրթությանն աջակցող Մանկավարժահոգեբանական և այլ օժանդակող ծառայությունների մատուցող ծառայություն:

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատում

Կրթական ծրագրերի մասնակցության դիտարկման , երեխայի զարգացման հնարավորությունների բացահայտման և կրթության առանձնահատուկ անհրաժեշտ պայմանների սահմանման գործընթացի անհրաժեշտություն:

Ֆինանսավորման բարձրացման չափաքանակ

ՀՀ կառավարության կողմից սահմանված ֆինանսի չափը , որն անհրաժեշտ է ԿԱՊԿՈՒ- ի համար:

. Անհատական ուսուցման պլան

Հանրակրթության պետական առարկայական չափորոշիչների , ծրագրերի և երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի հիման վրա կազմած փաստաթուղթ որը սահմանում է երեխայի կրթության կամակերպման տարեկան նպատակը խնդիրները և դրանց գոնծողությունները:

Կանխարգելիչ միջամտությունների պլան

- երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի հիման վրա կազմված փաստաթուղթը, որը կիսամյակային կտրվածքով սահմանում է երեխայի կրթության կազմակերպման անհրաժեշտ ծառայությունների տրամադրման և միջավայրային հարմարեցումների վերաբերյալ գործողությունները (նպատակներ, այլ նպատակը տանող քայլեր, դասավանդման մեթոդներ, տեղի և դասասենայիկի հարմարեցումներ, ժամանակի կազմակերպում և այլն):

Կրթության կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների մասն է կազմում առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատումը, որն իրականացվում է երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների սահմանաման համար:

§Հանրակրթության մասին ՀՀ օրենք , մաս 1, 10.1 կետ: ©UNICEF Armenia/2018/Osipova 9

Երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատումն իրականացվում է մանկավարժահոգեբանական գնահատման չափանիշներին համապատասխան և նպատակ ունի ստանալու

1. - երեխայի կրթության առանձնահատուկ պայմաններ ապահովելով ծրագրային , մեթոդական և այլ միջավայրային անհրաժեշտ հարմարեցումներ:
2. ՀՀ օրենքով սահմանված կարգով և դեպքերում ֆինանսավորման բարձրացված չափաքանակ տրամադրելու հիմքերը
3. մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների մակարդակը, ծավալները և տևողությունը:

Երեխայի գնահատման գործընթացն իրականացնում է կրթական յուրաքանչյուր աստիճանի առաջին տարում (առաջին, հինգերորդ և տասներորդ դասարաններումինչպես նաև երբ երեխայի մոտ ուսումնառության ընթացքում, արտակարգ իրավիճակներով պայմանավորված , նկատվում են կայուն դժվարություններ :

Գնահատումն իրականացվում է 2 փուլով.

1. դպրոցական գնահատում, որն իրականացվում է հաստատության ուսուցիչների մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների խմբի կողմից բացահայտելու

կրթության գործընթացում երեխայի արդյունավետ մասնակցության սահմանափակումները, դրանց առընչվող միջավայրային խոչընդոտող գործոնները և դրանց հաղթահարման խթանիչ գործոնները:

2. Տարածային մակարդակի գնահատում, որն իրականացվում է տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների կենտրոնի կողմից՝ որոշելու երեխայի մոտ այս կամ այն ֆունկցիայի խանգարման աստիճանը , և պայմանավորված՝ ԿԱՊԿՈՒ- ի կարիքը: Վկայագրված երեխայի առաջընթացը կամ հետընթացը գնահատելու համար յուրաքանչյուր տարի իրականացվում է վերագնահատում տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների խմբի կողմից դպրոցի մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների խմբի հետ համատեղ:

Որպես դիտարկում իրականացնող գլխավոր անձ համագործակցելով դպրոցի մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների խմբի հետ , դասավանդող այլ ուսուցիչների և աշխակերտի ծնողների հետ , ուսուցիչը որոշակի ժամանակահատվածում , դիտարկման մեթոդի միջոցով, հավաքագրում է համապատասխան տեղեկություններ երեխայի կարողությունների, հետաքրքրությունների,, անձնային որակների, կարիքների ու դժվարությունների, ուժեղ կողմերի, հասակակիցների հետ փոխհարաբերությունների և այլի մասին: Երեխայի հնարավորությունների մասին , կարիքների և զարգացման առկա մակարդակի դիտարկումը շատ կարևոր է նրա հետագա ուսումնառությունը պլանավորելու և կազմակերպելու համար: Գնահատման այս փուլը, կատարվում է երեխայի ուսուցիչների մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների աշխատողների կողմից դիտարկման արդյունքների ուսումնասիրության ու վերլուծության համար:

Եթե երեխայի դպրոցական մակարդկի գնահատման արդյունքների վերլուծությունը չի խանգարում երեխայի մոտ որևէ ֆունկցիայի խանգարման բայց երեխան մի քանի ոլորտներում ունի թեթև դժվարություններ, ապա մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների խումբը մշակում է «կանխարգելիչ միջոցառումների պլան»՝ կիսամյակի կտրվածքով ծառայությունների տրամադրման և միջավայրային հարմարեցումների վերաբերյալ (նպատակներ և դեպի այդ նպատակները տանող քայլեր, դասավանդման մեթոդներ, տեղի և դասաենյակի վերադասավորումներ, ժամանակի կազմակերպում և այլն):

Կարևոր է , որ ուսուցիչը կամ մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների խումբը դիտարկման արդյունքում կարողանա պարզել թե երեխան գնահատման գործիքի, որ ոլորտներում ունի դժվարություն:

Դպրոցների համար նախատեսված երեխայի գործունեության գնահատումը բաղկացած է

հետևյալ բաժիններից՝

1. Ըմբռնել հրահանգները և հետևել դրանց
2. Հարմարեցման կարողություն
3. Մասնակցելու և ակտիվ լինելու շահագրգռվածություն
4. Փոխհարաբերությունները հասակակիցների հետ

Վերոնշյալ հատկանիշները առավել հանդիպում են աուտիզմով տառախող երեխաների մոտ: Նրանց հետ առավել հարմարվող և քնքուշ պետք է լինի ուսուցիչը: Երբեմն էլ հանդիպում են նրանց մտավոր գերունակություններ ունեցող տաղանդավոր տեսակները, ուստի ուսուցիչը այնքան հմուտ պետք է լինի, որ կարողանա բացահայտել դրանք:

5.Ինքնասպասարկում

6. Տեղաշարժման խնդիր
7. Դաստակի և ձեռքերի դժվար գործածում

Այս խնդիրները հատկապես դրսևորվում են ֆիզիկական տկարություն և հաշմանդամություն ունեցող աշակերտների մոտ: Այս դեպքում, օրինակ ուսուցիչը դասապրոցեսի ընթացքում պետք է մոտենա նրանց, հանձնարարի այնպիսի առաջադրանքներ, որ տեղում կարողանան կատարել, առանց գրատախտակի օգտագործման, սակայն, դա պետք է արվի այնքան նրբորեն,որպեսզի դրանից չիջնի աշակերտի ինքնագնահատականը սեփական անձի նկատմամաբ:

8.Ուշադրություն

9. Հիշողություն

10. Հաղորդակցում

11.Ընտրություն կատարելու կարողություն

12. Կարդալու կարողություն

13. Գրելու կարողություն

Այս խնդիրը առավել դրսևորվում է կուրությամբ կամ թույլ տեսողությամբ տառապող աշակերտների մոտ, նրանց շատ օգնում է հատուկ նշագրերը, որոնցից իրենք օգտվում են,

սայկայն դժվարությունն այն , որ դա անհասկանալի է ուսուցչի համար, քանզի հատուկ մասնագետներն են տիրապետում այդ գրերին: Ուսուցչին մնում է միայն թելադրելու միջոցով նյութը հասանելի դարձնել աշակերտին:

15. Խոսելու կարողություն
16. Մեքենայով փոխադրվելու
17. Վարքի կառավարում
18. Կողմնորոշում
19. Ապահովության դատողություն

Նշվածները առավել դրսևորվում են այն երեխաների մոտ , ովքեր ունեն մտավոր հետամնացության խնդիր: Թերևս այս խմբի աշակերտների հետ ամենից դժվարն է աշխատելը, նրանց կրթական կարիքները բավարարելը երբեմն թվում է անհնարին:

Սրանցից յուրաքանչյուրը կարիքներ են, որ ուսուցիչը պետք է մտածի և ելքեր փնտրի դասապրոցեսի ընթացքում աշակերտի հետ դժվարություններն հաղթահարելու և կրթական արդյունք ցուցաբերելու համար: Օգտագործում ենք տարբեր գործիքներ:

Եթե գործիքի կիրառման արդյունքը հանգում է լիակատար կամ ձևավորող ինքնուրույնության մակարդակին, , ապա ոլորտում երեխան հավելյալ աջակցության կարիք չունի : Եթե գործիքի կիրառման արդյունքը հանգում է, վերահսկողության սահմանին , ապա արդյունքների գնահատման սանդղակում X նշանով տրվում է համապատասխան սյունյակը: Այս դեպքում հավելյալ աջակցություն չի պահանջում, սակայն երեխան գտնվում է ուսուցչի հսկողության ներքո: Համարվում է, որ տվյալ ոլորտում երեխան , ունի աջակցության կարիք, թեթև աջակցությունների, միջին աջակցությունների, մեծ հաճախականությամբ աջակցությունների կամ ամբողջական աջակցության ՝ ըստ աստիճանի:

Կրթությանն ուղղված մի շարք կարևոր ձևեր կան, որոնք շատ օգնում են դասընթացն առավել

հետաքրքիր և լեցուն անցկացնելաու համար:

Ակնհայտ իրողություն է, որ դասարանում տարածությունը կարծես բաժանվում է երկու մասի՝ առջևի գոտի և ետին գոտի: Առջևի գոտին սովորելու համար ավելի նպաստավոր է, քանի որ այնտեղ սովորողների՝ ուսուցման գործընթացին ներգրավվելու հնարավորությունները շատ են: Նրանք չեն կարող դասից շեղվել, զբաղվել այլ գործունեությամբ կամ զրուցել: Ետին գոտին պակաս նպաստավոր է, քանի որ այնտեղ կարող է աղմուկ լինել, սովորողները երբեմն չեն ցանկանում կենտրոնանալ դասին և շեղվում են: Հետևաբար, ողջ դասարանում արդյունավետություն ապահովելու համար ուսուցիչը պետք կարողանա համադրել բոլոր վերոնշյալ մեթոդներն ու սկզբունքները և գիտակցի դրանց կիրառման առաջնահերթությունը՝ բազմաթիվ մանկավարժական, կրթական, սոցիալ հոգեբանական և այլ գործոնների հաշվառմամբ:

Հաջորդիվ ներկայացնեմ խմբային աշխատանքի օրինակներ, որոնք արդյունավետ կլինեն իրականացնել դասի թեմայի կիրառմամբ.

Նախագիծ - Խմբային աշխատանքի այս տարբերակը ենթադրում է առավել համակարգված նախապատրաստում և իրականացում: Կարելի է ընտրել որևէ արդիական թեմա, օրինակ՝ «Շրջակա միջավայրը» - խմբի անդամներին հանձնարարել՝ հավաքել այդ թեմային վերաբերող բազմատեսակ նյութեր, տեղեկություններ: Առաջին ենթախումբը կարող է գտնել կանաչ գոտու վերարտադրման և ոչնչացման վերաբերյալ նյութեր, երկրորդը՝ ջրի աղտոտման և խնայողաբար օգտագործման, երրորդը՝ հավաքել-առանձնացնել թեմային վերաբերող կարևոր փաստերը, չորրորդը՝ կազմել պրեզենտացիա, հինգերորդը՝ պրոյեկտորի օգնությամբ ներկայացնել ողջ նյութը, և այսպես շարունակ: Նմանատիպ հանձնարարությունները նպաստում են և՛ ընկալողական, և՛ վերարտադրողական կարողությունների զարգացմանը: Սակայն չպետք է մոռանալ, որ նախագիծը հաջողված է, երբ սովորողների լեզվահաղորդակցական կարողությունները բավարար ձևավորված են, հակառակ պարագայում այս մեթոդը պարզապես կձախողվի:

Հարցազրույց - Այս մեթոդն արդյունավետ է ուսուցման բոլոր փուլերում: Բնականաբար, առավել ցածր մակարդակներում հարցերն ավելի պարզ ու մատչելի են, օրինակ հարցնել Հայաստանի քաղաքների մասին: Բարձր մակարդակներում տրվում են ավելի բարդ հարցեր, որոնց պատասխանները ներառում են նաև կարծիքի, տեսակետի արտահայտում, մտքերի փոխանակում, համաձայնում, հակադրում և այլն: Օրինակ բացատրել, թէ ինչու և ինչ պայմաններում է ջուրը երկրի վրա հնդիպում երեք տարբեր վիճակներում (ջրի շրջապտույտը բնության մեջ):

Մտագրոհ - Այս մեթոդը սովորաբար կիրառվում է սովորողներին խոսքային փոխներգործությանը նախապատրաստելու համար: Նախքան տեքստն ընթերցելը քննարկվում են որոշ թեմաներ, կարծիքներ արտահայտվում և այլն: Օրինակ՝ եթե ներկայացվում է որևէ թեմա, օրինակ՝

Սասունցի Դավիթ էպոսը , այդ դրա վերլուծությունը և կերպարների ուսումնասիրությունը պետք է կատարվի մի քանի եղանակներով ա)Համեմատական մեթոդով , բ)ժխտական մեթոդ, գ)էտալոնային մեթոդ, դ)պատմամշակութային ակնարկ և այլն:

Կարծիքների փոխանակում - սովորաբար, սովորողները դժվարանում են կարծիք արտահայտել: Այդ իսկ պատճառով այս մեթոդը առավել արդյունավետ է ուսուցման փուլերում: Կարելի է առաջադրել տարբեր թեմաներ, օրինակ հայկական հեքիաթների արդիականությունը ,առակների և ասացվածքների խրատադաստիարակչական նպատակը, երեխաների իրավունքների միջազգային պաշտպանությունը, բնության և կենդանիների պաշտպանություն և այլն: Այս վարժությունը խթանում է սովորողների հաղորդակցական կարողությունների, ինչպես նաև ստեղծարար ու քննական մտածողության զարգացումը:

Խաղային տեխնոլոգիայի կիրառումը օգնում է լուծել մի շարք կրթական կարիքներ: Խաղային տեխնոլոգիայի կիրառումը բավականին մեծ հնարավորություններ է ստեղծում ուսումնական գործընթացում: Հետաքրքիր են տարբեր թեմաներով խաղ-ներկայացումների, դերային, իրավիճակային խաղերի կազմակերպումը, երբ խմբի անդամներից մի քանիսը, ներգրավված լինելով խաղի մեջ, կատարում են որոշակի դեր, կամ նմանակում են որոշակի իրավիճակներ: «Ես էքսկուրսավար եմ», «Ես մնջախաղի դերասան եմ» , «Ես ուսուցիչ եմ», առաջացնում են ոգևորություն, այս դեպքում անկախ կարողություններից և ունակություններից բոլորը ցանկանում են մասնակցել դաս- խաղին: Այստեղ առավել կարևոր են նախապատրաստական աշխատանքները և ռեֆլեքսիան: Խաղը պետք է մանրակրկիտ նախապատրաստվի, որպեսզի չվերածվի զուտ զվարճանքի կամ ժամանցի միջոցի: Պետք է հաշվի առնել յուրաքանչյուր թեմայի քննարկման-ներկայացման դիդակտիկ, զարգացնող և դաստիարակող առանձնահատկությունները:

«Հարցազրույց զբոսաշրջիկի հետ» թեմայով խաղը պահանջում է համապատասխան գիտելիքներ՝ այս կամ այն մասնագիտական ոլորտում հաղորդակցվելու համար: Այս խաղի նախապատրաստական աշխատանքները ներառում են հետևյալ կողմերը.

- պարզել խաղի մասնակիցների մասնագիտական կողմնորոշումները, հստակեցնել, թե յուրաքանչյուր մասնակից որ վայրերում կուզենար լինել,
- պարզել յուրաքանչյուր մասնակցի պատկերացումները տվյալ վայրի աշխարհագրական պայմանների վերաբերյալ,
- կատարել համապատասխան առաջադրանք՝ ինքնուրույն տեղեկություններ հավաքել և հարստացնել գիտելիքները տվյալ աշխարհագրական օբյեկտների մասին:

Յուրաքանչյուր խաղի վերջում ուսուցիչը ամփոփում է արդյունքները, տալիս իր գնահատականը,

նշում սխալները և վրիպակները ինչպես նաև առանձնացնում առավել բարձր արդյունք ցուցաբերած մասնակիցներին: Այդպիսով քաղաքակրթության բազմադարյան միտքը ժամանակի և տարածության տարբեր հատվածներում նպատակ է հետապնդել հասարակական, սոցիալ-քաղաքական, տնտեսական և համակեցության մնացած բնագավառներում մարդկության կուտակած գիտելիքներն ու փորձը համակարգել և տիպաբանել, դրանք օգտագործել, որպեսզի հոգան աշակերտների կրթական կարիքները: Քաղաքակրթական փորձի դիտարկման համար էական, եթե ոչ առանցքային գործոն է հանդիսանում տեխնոլոգիական առաջընթացը: Հասարակական քաղաքական զարգացումները, ինչպես նաև դրանց որպիսությունը, բնույթը, զարգացման տեմպերը մեծապես կախված են ժամանակի տեխնոլոգիաներից: Պետք է անպայման նշել, սակայն, որ վերոնշյալ երևույթների միջև գոյություն ունեցող հարաբերակցությունը միակողմանի չէ, որովհետև տեխնոլոգիական

առաջընթացների անխուսափելի անհրաժեշտությունն ուղղակիորեն կապված է հասարակական, տնտեսական, սոցիալ-քաղաքական, կրթական ոլորտներում քանակական և որակական կուտակման արդյունքում ամբարված էներգիայի և ձևավորված պահանջարկի հետ; Երբ մենք բացատրում են մայրցամաքների մասին, պատմում նրանց հայտնագործումն, աշակերտի մոտ առավել ընկալելի է դառնում , երբ սահիկաշարով ցույց ես տալիս մայրցամաքին վերաբերող նյութեր, եթե դպրոցում առկա է էլեկտրոնային գրատախտակ աշխակերտի կրթական կարիքները բավարարելն դառնում է առավել դյուրին: Աշխարհարության դեպքում գլոբուսով, քարտեզներով, այդ թվում թվային քարտեզներով, աշխատելն համարվում է պարտադիր պայման, հետևաբար դրանց առկայությունն պարտադիր է:

3. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հետազոտելով և ուսումնասիրելով թեման՝ ուսուցչի կողմից երեխաների ուսումնառության ընթացքում նկատված կրթական կարիքների բացահայտումը, եկել եմ այն եզրակացության, որ ուսուցիչը նախևառաջ պետք է պահանջներ դնի իր առջև, հետո մյուս օղակների, քանզի աշակերտը առավել կարիք ունի բանիմաց, գիտելիքներով զինված մանագետի, որն կդառնա աշակերտի համար նոր երևույթների բացահայտման և մեկնաբանման համար լավագույն մարդը:

Մայրենիի առարկայի շրջանակներում, այդ կարիքները կարող են լինել.

1.գունավոր տառաշարերով, բազմաբնույթ և տարատեսակ ուսումնական քարտերով,գունավոր կավիճների օգտագործման եղանակով, մագնիսական կպչուն թվանշանների և տառատեսակների օգտագործում հատուկ թիթեղյա գրատախտակների վրա, նկար-պատմությունների և հեքիաթների մեծադիր պաստառներով:

2.Էլեկտրոնային գրատախտակի առկայությունն 22-րդ դրում արդեն դիտվում է ոչ թե շքեղություն, այլև անհրաժեշտություն՝ հատկապես օգնում է խնդիրներ լուծելիս:

3.Համակարգչային կաբինետն իր հերթին հանդիսանում է կրթական գործընթացի անքակտելի մասը՝ հատկապես սահիկաշարներ ցուցադրելու տեսանկյունից, նաև տարբերկրթական ուսումնական նյութեր նայելու համար:

4. ԿԱՊԿՈՒ աշակերտների համար՝ իբրև ուսուցման միջոցներ օգտագործվում են նախապես համակարգչից դուրս բերած նկարներ՝ թեմային վերաբերվող:Այս աշխակերտները գնահատվում են նաև թեմայի հետ կապված տարաբնույթ նկարներ նկարելով՝ ուստի աշակերտը պետք է ապահովված լինի համապատասխան պարագաներով:ԿԱՊԿՈՒ աշակերտների համար պետք է հատկացվի առանձին զարգացնող խաղերով և հատուկ ուսումնական նյութերով հագեցված դասասենյակներ: Դպրոցը կամ ուսումնական հաստատությունը պետք է հագեցված լինի հենաշարժողական խնդիրներ ունեցող երեխաների համար թեքահարթակներով,սանհանգույցների որոշ մասը պետք է առանձնացված լինի հատուկ հարմարեցված զուգարանակոնքերով:

Աշակերտների կրթական կարիքների բացահայտումն ու վերացումն ոչ միայն կնպաստի ուսման որակի բարձրացմանը, այլև դասը աշակերտի համար կդառնա հետաքրքիր և բովանդակալից:Նրանց կրթական մակարդակի ավելացումն ու դասի նկատմամբ շահագրգռվածությունն անխուսափելի կլինի:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Յու Ամիրջանյան, Ա. Սահակյան <<Մանկավարժություն>>,

2. Մ. Մանասյան, Ա. Հովսեփյան <<Աշխարհագրություն 9 >> ուսուցչի ձեռնարկ,

3. Ս. Խաչատրյան.- Եր.: Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամ, Ուսուցման արդյունավետ հնարներ Հայաստան 2020 .- 74 էջ:

4. Ա. Վ. Պետրովսկի ՛՛Տարիքային և մանկավարժական հոգեբանություն՛՛

5. Կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատումը տարածքային մակարդակում: Մեթոդական ուղեցույց : Հանրապետության մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների կենտրոն , 2018.- 150 ¿ç

6. Այլ ինտերնետային կայքէջեր: